

## Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

### -1540 փետրվար 5

Ծնվեց հայ պատմագիր, բանաստեղծ, մանկավարժ Սիմեոն Ապարանցին: (Վախճ. 1614թ.-ին)

### -1592 մարտ 29

Ծնվեց հայ առաջին աշուղ-երգիչ Նահապետ Քուչակը:

### -1636 մարտ 26

Կըզըբաշները վերագրավում են Երևանի բերդը:

### -1650 հունվար 4

ճարտարապետական հուշարձան Փոքր Վեդի գյուղի մոտ՝ Խոր Վիրապում: Շու գյուղում կայացավ Ղարաբաղի Դիզակ և Վարանդա գավառների աշխարհիկ և հոգևոր առաջնորդների ժողով:

-1661 մայիս 27 Ծնվեց միջնադարյան հայ բանաստեղծ, աշուղ Նաղաշ Հովնաթանը: (Վախճ. 1722թ.-ին):

-1676 օգոստոս 25 Ծնվեց հայ հասարակական, մշակութային և եկեղեցական գործիչ Մխիթար Սեբաստացին: (Վախճ. 1749թ.-ին):

### -1722 հունիս 14

Ծնվեց հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովան (Վախճ. 1795թ.-ին):

### -1723 հուլիս 13

Թուրքերը գրավում են Թիֆլիսը:

-1724 մարտ 24 Գանձակում պայմանագիր է կնքվում հայ և ադրբեջանցի բնակչության միջև՝ ընդդեմ թուրքերի:

-1725 փետրվար 10 Թուրքական 6000-անոց մի բանակ մտնում է Վարանդա և գրեթե ամբողջովին ոչնչացվում:

-1726 հոկտեմբեր 10 Սարու Մուստաֆա փաշայի զորաբանակը գրոհում է Շուշի քաղաքի վրա և 8-օրյա մարտերից հետո գրավում:

### -1728 փետրվար 20

Վախճանվեց հայ զորավար Դավիթ Բեկը:

### -1735 հուլիս 8

Եղվարդի ճակատամարտում թուրքերը ջախջախիչ պարտություն են կրում:

### -1738 դեկտեմբեր 4

Կ. Պոլսում ծնվեց պատմաբան Միքայել Չամչյանը: (Վախճ. 1823թ.-ին):

### -1750 փետրվար 9

Ծնվեց հայ հասարակական գործիչ Հարություն Շմավոնյանը: (Վախճ. 1824թ.-ին):

### -1763 փետրվար 9

Էմինը Մոսկվայից ուղևորվում է Վրաստան՝ անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարը կազմակերպելու համար և մի տարի անց հեռանում է Վրաստանից:

### -1765 նոյեմբեր 14

Ծնվեց ռուսական բանակի զեներալ, իշխան Պետրոս Բագրատյանը: (Վախճ. 1812 թ.-ին):

### -1766 օգոստոս 1

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը կոնդակ է ուղարկում Եկատերինա II-ին՝ հայ ժողովրդին օգնելու խնդրանքով:

### -1768 հուլիս 30

Եկատերինա II-ի հրովարտակը Էջմիածնի իրավունքների մասին:

### -1769 հունիս 8

Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրման ծրագիրը ներկայացվում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարություն:

### -1780 հունվար 10

Հովհաննես Լազարյանը Հայաստանի ազատագրության մասին զեկուցագիր է ներկայացնում Ա. Սուվորովին:

հունվար 20 Հիմնադրվում է Նոր

Նախիջևանի հայկական գաղթօջախը:

### -1795 հունիս 16

Ծնվեց ռուս գրող, դիվանագետ Ալեքսանդր Գրիբոեդովը: Նա ջանքեր էր գործադրում հայերին Պարսկաստանից վերադարձնել Հայաստան: (Վախճ. 1829թ.-ին):

սեպտեմբեր 12 Աղա-Մուհամադը գրավում է

Թիֆլիսը:

դեկտեմբեր 13 Ջավադ խանը Գանձակը

հանձնում է ռուսներին:

### -1796 սեպտեմբեր 25

Աստրախանում ծնվեց Հարություն Ալամդարյանը: (Վախճ. 1834թ.-ին):

### -1797 մարտ 13

Աղա-Մուհամադը գրավում է Շուշին և սպանվում է Շուշու բերդում:

(Շարունակելի)

# Լուրեր Իրանահայ համայնք

**Գեորգ Վարդանը և Ռոբերտ Բեգլարյանը՝ հյուսիսային և հարավային իրանահայության պատգամավորներ**



Փետրվարի 20-ին կայացած Իսլ. խորհրդարանի 7-րդ նստաշրջանի ընտրությունների արդիւնքում Թեհրանի և Իսլահամի իրանահայութեան պատգամավոր է ընտրվել Գեորգ Վարդանը՝ 11.862 քվեներով, ընդհանուր քվե՝ 13.498: Սպահանի և հարավային իրանահայության ընտրաշրջանում ընդհանուր 2.908 քվեներից Ռոբերտ Բեգլարյանը շահել է 2.703 քվե, որով ընտրվել է նույն շրջանի իրանահայության պատգամավոր: իրանահայության պատգամավորության թեկնածուներն էին:

Ճարտ. Գեորգ Վարդան, Դոկտ. Լեւոն Դաթեան, Պրն. Արմեն Բեգլարյան, Դոկտ. Ռուբիկ Սարգսյան, Պրն. Ռոբերտ Բեգլարյան, Ճարտ. Վարդան Վարդանյան

## ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՎ ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻՆ

Լուս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի կազմակերպած պատմական Հայաստանի քաղաքների ու գավառների նվիրված 14-րդ միջազգային գիտաժողովը տեղի է ունենալու 2004 թ. մայիսին և անդրադարձնալու է Թավրիզի, Թեհրանի, Մակուի, Սալմաստի, Ղարադաղի և իրանահայ այլ գաղութների պատմությանը՝ սկզբից մինչև մեր օրերը, հաղորդում է ՌԱԿ Արեւմտյան Ամերիկայի պաշտոնաթերթ «Նոր օր» շաբաթաթերթն իր դեկտեմբերի 20-ի համարում: Նախորդ՝ 13-րդ գիտաժողովին (2003թ. նոյեմբերի 14-16-ը), որը նվիրված էր Նոր Զուղայի հիմնադրման 400-ամյակին, ներկա են եղել մրցանակային թվով ունկնդիրներ՝ 2000 հոգի: Դա առաջին գիտաժողովն էր, որը կենտրոնացել էր Օսմանյան կայսրության և այժմյան

թուրքական պետության սահմաններից դուրս գտնվող մի շրջանի պատմության վրա: Երեւանցի երեք գիտնականներ՝ Հրաչիկ Միրզոյանը, Սուրադ Հասրաթյանը եւ Ջենմա Պառնասյանը, ինչպես նաեւ Նոր Զուղայից Հոգժ. Շահան Ծ. վրդ. Սարգսյանն իրենց զեկուցումներով ներկայացրել են Նոր Զուղայի ճարտարապետության ու բարբառի առանձնահատկությունները եւ համայնքի ներկա վիճակը: Հայաստանից մյուս մասնակիցները՝ Աշոտ Ստեփանյանը, Շուշանիկ Խաչիկյանն ու Արծվի Բախչինյանն անդրադարձել են նորջուղայեցիներին որպես ժեւեռ դարերի առեւտրականների, հովանավորների եւ մշակութային միջնորդների: Գիտաժողովից հետո մասնակիցներին ճաշկերույթի է հրավիրել Ամերիկայի իրանահայ միությունը, որը հատկապես մեծարել է գիտաժողովների շարքի կազմակերպիչ, Կալիֆոռնիայի համալսարանի հայ կրթական հիմնարկության արդի հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանին եւ Շահան Ծ. վրդ. Սարգսյանին:



**«Թունիկ»-ի առաջին համարը**

Թեհրանի «Թունյան» աղջկանց ուղեցույց դպրոցի աշակերտուհիների ջանքերով տպագրվել է «Թունիկ» պարբերականի առաջին համարը եւ առջեւում է երկրորդի հրատարակումը: «Թունիկ»-ը պարունակում է գիտական եւ հետաքրքրական նյութեր, լուրեր, բանաստեղծություններ եւ այլն՝

հայերեն, եւ պարսկերեն լեզուներով: «Վ. Սողոմոնյան» տղայոց միջնակարգ դպրոցի կողմից նաեւ տպագրվել է «Բարեւ» հանդեսի 11-րդ համարը:

**Իրան**

**295 մարդ է զոհվել եւ 450-ը՝ վիրավորվել Իրանում տեղի ունեցած երկաթուղային աղետի հետեւանքով**

ԹԵՀՐԱՆ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: 295 մարդ է զոհվել եւ 450-ը՝ վիրավորվել Իրանի հյուսիս-արեւելքում գտնվող Նիշապուր քաղաքից 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Խայան երկաթուղային կայարանի շրջանում չորեքշաբթի օրը տեղի ունեցած ողբերգության հետեւանքով: Ջոհվածների թվում են իրշեջներ, ոստիկաններ, Խայան կայարանից հարող հինգ բնակավայրերի բնակիչներ: Երկաթուղային աղետի զոհ են դարձնում նաեւ Նիշապուրի քաղաքագլուխը, իշխանության տեղական մարմինների ներկայացուցիչներ, ԻՌՆԱ գործակալության մի քոթակից, որը ժամանել էր երկու ապրանքային գնացքակազմերի բախման վայր: Ստեղծվել են երկաթուղային աղետի պատճառների հետաքննության, ինչպես նաեւ բնակչությանը, զոհվածների հարազատներին ու մերձավորներին օգնություն ցույց տալու հանձնաժողովներ:

Մեշհեդի եւ Իրանի մյուս քաղաքների միջեւ

երկաթուղային հաղորդակցությունն ընդհատված է: Ինչպես հայտնել են տեղական իշխանությունները, այն չի վերականգնվի նաեւ այսօր, քանի որ երկաթուղային պատահարը լրջորեն վնասված է: Բացի այդ, դեռեւս պահպանվում է բեմզինով լցված այրվող ցիստեռների պայթելու սպառնալիքը: Այդ առնչությամբ պատահարի վայրը շրջափակված է մնում:

Հիշեցնենք, որ նախօրյակին երկու գնացքակազմերի բախվելու հետեւանքով բռնկվել էին բեմզինով լցված 6 ցիստեռն, քիմիական պարարտանյութերով՝ 7 վագոն, ձյութով՝ 18 վագոն եւ բանբակով բեմնված 10 վագոն:

Քոֆի Անանը հայտարարել է, որ ՄԱԿ-ը պատրաստ է օգնել Իրանում երկաթուղային աղետի հետեւանքով տուժածներին: Չորեքշաբթի օրը ՄԱԿ-ի կենտրոնակայանում տարածված հայտարարության մեջ գլխավոր քարտուղարը ցավակցություն է հայտնել Իրանի կառավարությանը եւ աղետի զոհերին:

**ԻՐԱՆԻ 125 ՊԱՏՎԱԿԱՎՈՐՆԵՐ ՎԱՅՐ ԴՐԵՑԻՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԸ**

Իրանի խորհրդարանի 125 անդամներ երեկ գրավոր հրաժարական ներկայացրին: Նրանց մեծ մասն անդամ է «Իրանի մասնակցության ճակատ» կազմակերպությանը, որի ղեկավար Սոհամադ Ռեզա Խաթամին հարազատ եղբայրը երկրի նախագահի, հրաժարականները ներկայացնելուց հետո տված մամուլ ասուլիսում հայտարարեց, որ կազմակերպությունը չի մասնակցելու առաջիկա փետրվարի 20-ի խորհրդարանական ընտրություններին եւ փոխարենը պահանջում է անցկացնել հանրաքվե երկրի ապագայի շուրջ: Սոհամադ Ռեզա Խաթամիի գլխավորած կազմակերպությունը համարվում է Իրանում բարենորոգչական շարժման ավանգարդ: Հրաժարականների եւ ընտրություններին չմասնակցելու շարժառիթը Իրանի Պահապանների գերագույն խորհրդի վերջերս կայացրած որոշումն է՝ առաջիկա ընտրություններին 2000 թեկնածուների մասնակցությունն արգելելու մասին:

**Պահպանողականները 156 տեղ են ստացել երկրի խորհրդարանում**

ԹԵՀՐԱՆ, 26 ՓԵՏՐՎԱՐԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները որեւիցե անակնկալ չմատուցեցին: Պահպանողականները տեղերի մեծամասնություն ստացան յոթերորդ գումարման խորհրդարանում: Ըստ նախնական տվյալների, նրանք 290-տեղանոց խորհրդարանում կունենան 156 պատգամավոր: Բարեփոխումների կողմնակիցները, որոնք մեծամասնություն ունեն ներկայիս խորհրդարանում, պահպանել են միայն 39 տեղ, 31 տեղ ստացել են անկախ պատգամավորները: 5 տեղ ստացել են կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները: Խորհրդարանում 3 ներկայացուցիչ կունենան քրիստոնյաները: 58 տեղ առայժմ թափուր է մնում: Մեկ ամիս անց այդ տեղերը կհամալրվեն խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով: Ըստ պաշտոնական տվյալների, փետրվարի 20-ին կայացած ընտրություններին մասնակցել է երկրի՝ ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 50,57 տոկոսը:

## Հայաստան

### **ՏՅԱՌՆԵՂՈՒԱԶԸ ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐ**

Ամենայն հայոց Գարեգին Երկրորդ Վեհափառի տնօրինությանը Տյառնը դառաջը հռչակվել է նորապասակների օրհնության օր: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին ամեն տարի Տյառնընդառաջը նշում է փետրվարի 14-ին: Տյառնընդառաջի տոնակատարությունները սկսվում են փետրվարի 13-ի երեկոյան: Երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է արտերի եւ այգիների օրհնություն, որը խորհրդանշում է ձմռան ավարտն ու գարնանամուտը: Ժամերգության ավարտին կատարվում է մոմի օրհնություն: Հավատացյալները օրհնված մոմից վառում են իրենց մոմերը: Փետրվարի 14-ին՝ Տյառնընդառաջի տոնական Ս. Պատարագից հետո, բոլոր եկեղեցիներում կատարվում է նորապասակների օրհնության կարգ՝ զորացնելու նրանց սիրո եւ հավատարմության դաշինքը: Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուն Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ կմատուցվի Ս. Պատարագ, որից հետո Նավասարդ սրբազանը կկատարի նորապասակների օրհնության կարգ:

### **ԱՐՏԱԳՎԱԾԸ ՆՎԱԶԵԼ Է**

Հայաստանից մեկնողների եւ երկիր ժամանողների տարբերությունը 2003թ.կին կազմել է 9 հզ. մարդ: Միգրացիայի եւ փախստականների վարչության պետ Գագիկ Եզանյանը երեկ տեղեկացրեց, որ 2002 թ.կին այդ տարբերությունը կազմել է 3 հզ. մարդ: 2000 եւ 2001 թթ.կին բացասական հարաբերակցությունը եղել է մոտ 60 հզ.: Այսինքն, վերջին երկու տարիներին արտագաղթի միջոցով միտումը պահպանվում է:

### **2001 թվականի մարդահամարի վերջնական տվյալներով, ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 3 մլն 213 հազար մարդ**

ԵՐԵՎԱՆ, 27 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանում 2001թ. իրականացված մարդահամարի վերջնական արդյունքներով, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3 մլն 213 հազար մարդ, որից 2066.1 հազարը կամ 64.3 տոկոսը քաղաքային բնակչությունն է: Առկա բնակչության թիվը կազմել է 3002.6 հազար, ՀՀ մշտական բնակչության խտությունը 1 քառ. կմ-ի վրա՝ 108 մարդ:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պետ Ստեփան Մնացականյանի այսօր հրապարակած տվյալների, հանրապետության բնակչության ավելի քան 1/3-ը, իսկ քաղաքային բնակչության 53.4 տոկոսը կենտրոնացված է Երեւանում, որի մշտական բնակչության թիվը կազմում է 1103.5 հազար մարդ, մշտական բնակչության խտությունը Երեւանում 1 քառ.կմ-ի վրա՝ 4.861 մարդ:

Մշտական բնակչության 1 մլն 540 հազարը տղամարդիկ են, 1 մլն 671 հազարը՝ կանայք: Հանրապետության 1000 տղամարդուն բաժին է ընկել 1084 կին: Ընդ որում, կանանց թվի գերազանցումը տղամարդկանց թվաքանակին սկսվում է 20 տարեկանների տարիքային խմբից միայն:

Հանրապետության աշխատունակ տարիքի բնակչությունը կազմել է մշտական բնակչության 60.2 տոկոսը:

Ինչ վերաբերում է բնակչության կրթական մակարդակին, ապա 15 եւ բարձր տարիքի 1000 բնակչից 170-ն ունեն բարձրագույն եւ բարձր (հետբուհական եւ գիտական ստիճան), 198-ը՝ թերի բարձրագույն եւ միջին մասնագիտական, 133-ը՝ ընդհանուր հիմնական եւ 62-ը՝ ընդհանուր տարրական կրթություն: Տասնհինգ եւ բարձր տարիքի բնակչությունից 41.6 հազար մարդ չի ունեցել տարրական կրթություն, որոնց 35.1 տոկոսը չի եղել տառաճանաչ՝ հիմնականում 50 եւ բարձր տարիքի խմբից:

Հանրապետության նույն տարիքային խմբի 1000 բնակչից 621-ն ամուսնացած է, 264-ը երբեք ամուսնացած չի եղել: Ընդ որում, կանանց թիվ, որոնք մշտել են ամուսնացած լինելու մասին, գերազանցել է ամուսնացած տղամարդկանց թվաքանակը:

2001 թ. մարդահամարի արդյունքներով, հանրապետության բնակչության 99.1 տոկոսը ՀՀ քաղաքացիներ են, 0.4 տոկոսը քաղաքացիություն չի ունեցել, 0.2 տոկոսը մշտել է ՌԴ քաղաքացիություն ունենալու մասին, իսկ մնացածն այլ երկրների քաղաքացիություն են ունեցել:

Տեղեկատվություն է ստացվել նաեւ բնակչության գոյության միջոցների հիմնական աղբյուրների վերաբերյալ: Բնակչության 29.3 տոկոսը որպես գոյության հիմնական աղբյուր է մշտել աշխատանքը, ներառյալ անձնական օժանդակ տնտեսությունում, 16.6 տոկոսը՝ կենսաթոշակը, կրթաթոշակը, նպաստը, պետական ապահովությունը, 0.4 տոկոսը՝ զործարկության նպաստը: Բնակչության 44 տոկոսի համար հիմնական աղբյուր է հանդիսացել այլ անձանց խնամքը:

Հանրապետության զբաղված բնակչության 41.7 տոկոսը զբաղված է եղել վարձու աշխատանքով, 9.7 տոկոսը անհատ ձեռնարկատերեր ու ինքնազբաղվածներ են եղել, 24.4 տոկոսը՝ գյուղացիական տնտեսության անդամներ:

## Հայոց Սփյուռք

### **ԻՐԱՔԻ ՀԱՅԵՐԸ ՄՊԱՍՈՒՄ ԵՆ ԼԱՎ ՕՐԵՐԻ**

20 հազար իրաքահայերից մի քանի տասնյակ ընտանիք է հեռացել երկրից:

Վահագն Մեսրոպյանն Իրաքի հայոց ազգային կենտրոնական վարչության ատենապետն է եւ ասում է, որ Իրաքում պատերազմից եւ ամերիկյան օկուպացիայից հետո ընդամենը մի քանի տասնյակ հայ ընտանիքներ են հեռացել երկրից՝ Հորդանան, Սիրիա, Հայաստան: «Իրաքի հայերն սպասում են լավ օրերի: Ոմանք հուսով են, որ ապագան լավ է լինելու, ոմանք՝ ոչ: Ընդհանուր առմամբ իրաքահայությունը լավատես է», ասում է Մեսրոպյանը: «Այս պատերազմի ընթացքում ռմբահարումներից երկու հայ ընտանիք գոհիվեց՝ յոթ մարդ: Եվս երկու հայեր սպանվել են ահաբեկչական զործողության հետեւանքով: Բաղդադի հայկական եկեղեցիները, ակումբները չեն տուժել», ասում է նա:

Հայերի թիվն ամբողջ Իրաքում մոտ 20 հազար է, հիմնականում Ցեղասպանությունից փրկված ընտանիքների ժառանգներ: Իրաքահայությունը կենտրոնացած է Բաղդադում մոտ 15 հազար, ինչպես

նաեւ Մոսուլ եւ Բասրա քաղաքներում, Ջախոյում եւ շրջանի Ավզրուկ գյուղում: Ջախոն եւ Ավզրուկն իրաքյան Քրդստանում են, որտեղ բնակվող մոտ 1.500 հայերը քրդախոս են, բայց պահպանել են ազգային ինքնությունը:

«Մի քանի տասնյակ հայ ընտանիքներ, որոնք ժամանակավորապես հեռացել են Իրաքից, պատրաստվում են վերադառնալ իրենց տները: Մի քանի օրից ես էլ եմ վերադառնալու Բաղդադ», ասում է Մեսրոպյանը:

Սադդամ Յուսեյնի իշխանության տարիներին իրաքահայերի սոցիալական վիճակը երկրի մյուս բնակիչների վիճակից չէր տարբերվում: Իրաքահայերը, Մեսրոպյանի ասելով, հիմնականում արհեստավորներ են, եւ այժմ, երբ ռմբահարությունները համեմատաբար մվազել են, նրանք կրկին վերադարձել են նախկին գրադանը:

Բաղդադում երեք հայկական եկեղեցի է գործում, ամբողջ Իրաքում ութ: Հայերն ունեն ակունքներ, մարզական եւ մշակութային միություններ, եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցներ: «Առաջնորդամիստը Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, որտեղ պատերազմի ընթացքում եւ այսօր ծեսեր, պատարագներ չեն լինում, բայց որպես առաջնորդամիստ գործում է: Բաղդադի մյուս երկու եկեղեցիները, մեկը՝ հայաշատ Նորաշեն թաղամասում (Սբ. Կարապետ), երկրորդը՝ Մեյդանում (Սբ. Աստվածածին) եւս անմնաս են եւ գործում են», ասում է Մեսրոպյանը:

Իրաքում ամերիկյան օկուպացիայից հետո Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի մի քանի ներկայացուցիչներ ձեւավորեցին նախաձեռնող խումբ եւ փորձեցին Բուշի վարչակարգից 20 մլն դոլար «պոկել» իրաքահայության կարիքներն ապահովելու համար, սակայն անհաջող:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բևի նախաձեռնությամբ էջմիածնական թեմերը հնարավորության սահմաններում գումարներ են հանգանակում եւ փորձում թեթեւացնել իրաքահայության սոցիալական վիճակը: Մեսրոպյանի ասելով, Կալիֆոռնիայի հայությունը 100 հազար դոլար է հանգանակել, եւ գումարը բաժանվելու է կարիքավոր հայ ընտանիքներին, օգնել են «Ջինիշյան» հաստատությունը, անհատ մեծահարուստներ:

Իրաքահայերին օժանդակում է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՅԲԸՄ), որի Բաղդադում գտնվող մասնաճյուղի միջոցով իրականացվում են հունամիտար, մշակութային ծրագրեր, ինչպես նաեւ ֆինանսական օգնություն կարիքավոր իրաքահայերին:

Հայաստանի սահմաններից մինչեւ Իրաք մոտ 300 կմ է, սակայն պատերազմի արձագանքներն այստեղ լավ չեն լսվում: Մոտ 20 հազար մեր հայրենակիցներ ապրում են անվտանգության բացակայության, ինքնասպան մահապարտներից ամեն պահ սպասվող սպառնալիքի, էլեկտրականության եւ ջրի սակավության, մի խոսքով՝ պատերազմի եւ օկուպացիայի պայմաններում:

*ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈՒՅԱՆ*

**Հայոց ցեղասպանության բանաձեւի առաջին ընթերցումը Կանադայի խորհրդարանում**

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Փետրվարի 25-ին Կանադայի խորհրդարանի հերթական նիստում «Քվեբեկյան

դաշինք» կուսակցության անդամ Մադլեն Դալֆոն Գիրալը խորհրդարանին է ներկայացրել Հայոց ցեղասպանության ճանաչման մասին թիվ 380 բանաձեւը, որով առաջարկվում է, որպեսզի «խորհրդարանը ճանաչի 1915-ի Հայոց ցեղասպանությունը եւ այն դատապարտի որպես մարդկության դեմ գործադրված ոճիր»: Երկրորդ ընթերցումը կայանալու է խորհրդարանի հերթական նիստում:

Խորհրդարանը աշխատանքները կվերսկսի մարտի 8-ին, եւ դրան հաջորդող երկու շաբաթվա ընթացքում հնարավոր կլինի եւս երկու անգամ քննարկել այդ հարցը եւ դնել քվեարկության: Քվեարկության ժամանակ փաստաթղթի ընդունման հնարավորությունը բավական մեծ է, որովհետեւ նախորդ օրվա քննարկումները ցույց են տվել, որ ընդդիմության երեք կուսակցությունները լիովին պաշտպանում են բանաձեւը: Ինչպես նաեւ այն պաշտպանում է կառավարող լիբերալ ազատական կուսակցության զգալի մասը:

**Միխեյլ Սահակաշվիլին հայտարարել է, որ «պատրաստ է երաշխավորել Աբխազիայի ինքնավարության ամենաբարձր աստիճանը վրացական պետության կազմում»**

ՄԱԿ, 27 ՓԵՏՐՎԱՐԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վրաստանի նախագահ Միխեյլ Սահակաշվիլին հինգշաբթի օրը կոչ է արել աբխազ ժողովրդին «վեր կանգնել առճակատումից եւ օգտագործել այն եզակի հնարավորությունը, որ բացվում է Վրաստանում վերջերս տեղի ունեցած փոփոխությունների շնորհիվ»: Նա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բաց նիստում նրա անդամներին ծանոթացրել է վրաց-աբխազական հակամարտության կարգավորման հիմնախնդրի նկատմամբ Թբիլիսիի նոր ղեկավարության դիրքորոշման հետ:

Վրաստանի ղեկավարը հայտարարել է, որ «պատրաստ է երաշխավորել Աբխազիայի ինքնավարության ամենաբարձր աստիճանը վրացական պետության կազմում»: «Ես պարտավորվում եմ վիթխարի ռեսուրսներ ուղարկել Աբխազիայի էկոնոմիկայի զարգացման համար, -ասել է նա: -Այդուհանդերձ, Աբխազիայի տնտեսական ներուժը կարող է իրացվել միայն այն ժամանակ, երբ թույլատրվի բռնագաղթված անձանց վերադարձը»:

Սահակաշվիլին ընդգծել է, որ Թբիլիսիի նոր ղեկավարությունը «ցուցադրեց իր ամուր քաղաքական կամքը, ճնշելով այն ուժերին, որոնք գտնում են, որ այդ հակամարտությունը կարելի է լուծել բռնությամբ եւ ուժի կիրառմամբ», ասել է Վրաստանի նախագահը եւ ավելացրել, որ «ի տարբերություն նախորդ կառավարության, որը հանդուրժում էր այդ ուժերին, մենք հաստատականորեն եւ վճռականորեն ապացուցեցինք, որ այդ ճանապարհը փակուղի է տանում»: Նա կոչ է արել Սուխումի ղեկավարությանը՝ «համանման քայլեր կատարել ի շահ խաղաղության», եւ «ընդունել, որ այն ճանապարհը, որով նա ընթանում է, նույնպես արդյունավետ չէ եւ կհանգեցնի միայն նոր փակուղիների»:

Վրաստանի նախագահը կոչ է արել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին «պարզորոշ ու միանշանակ հայտարարել, որ նրանք, ովքեր խաղաղության կողմնակիցներ չեն, դրա համար պատասխանատվություն կկրեն»:

## ՄԱՌՐԱՍԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՅՈՒ

Մադրասը քաղաք է Հարավային Հնդկաստանում, Բենգալյան ծոցի ափին: Տամիլնադ նահանգի վարչական կենտրոնն է: 1971կին, ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի» տվյալների, ունեցել է 2470 հազ. բնակիչ: Մադրասահայ համայնքը կազմավորվել է XVI դարում: 1547կին կառուցվել է առաջին հայկական եկեղեցին, 1772կին Ս. Աստվածածինը, որը գործում է ցայսօր: Հայերը մասնակցել են Մադրասի կառավարմանն ու բարգավաճմանը: Անգլիացիների գալուց առաջ Չին Փաթայի (Մադրասի) կառավարիչը եղել է հայազգի Ղոզազը (հավանաբար Ղուկասն Գ. Օ.): Մադրասահայեր Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բադրամյանը, Հարություն Շնավոնյանը մեծ դեր են խաղացել հայ ազատագրական գաղափարախոսության ձևավորման գործում: 1794կին Մադրասում է լույս տեսել հայ մամուլի առաջին «Ազդարարը»: Առաջինը մադրասահայերն են կազմել (1783կին) համայնքային կանոնադրություն «Տետրակ, որ կոչի հորդորակ», ըստ որի համայնքի բարձրագույն մարմինը տարեկան ընդհանուր ժողովն է: Մադրասահայության թվի մասին առանձին տեղեկություն չկա հանրագիտարանում, սակայն նշված է, որ հնդկահայ համայնքները ստվարացել են XVIII-XVIII դդ., երբ հաշվել են շուրջ 20և25 հազար մարդ, որոնք հիմնականում բնակվել են շուրջ 20 առևտրակենտրոններում՝ Ազրա, Կալկաթա, Բոմբեյ, Մադրաս, Հայդարաբադ, Դաքա, Լահոր, Դելի եւ այլ քաղաքներում: Բարգավաճել են հատկապես առաջին չորս քաղաքների համայնքները: Հանրագիտարանային այս տեղեկություններին ծանոթանալուց հետո հետաքրքիր է կարդալ ստորև թարգմանաբար ներկայացվող Մադրասում BBC անգլիական ռադիոընկերության թղթակից Չարլզ Հեյլենդի հոդվածը հայ համայնքի ներկա դրության մասին:

Հարավային Հնդկաստանի Մադրաս քաղաքը մի ժամանակ հպարտանում էր իր հայկական ծաղկուն համայնքով: Այժմ, սակայն, ընդամենը երկու հայ է մնացել այնտեղ: Նրանցից մեկը Մայքլ Սթիվն է, 35 տարեկան, քաղաքի հայկական եկեղեցու նվիրյալ պահապանը: Արդեն ինը տարի նա ապրում է այնտեղ եւ խնամում 18ևրդ դարից կանգուն մնացած եւ տեղի երբեմնի հայկական ներկայությունը հավերժացնող մայր տաճարը: Իր ավագ գործընկերոջ՝ 90ևամյա Գրիգորի մահվանից հետո նա է վերցրել այդ պարտականությունը: Ս. Աստվածածնի կոնաձեւ գմբեթով եկեղեցին գտնվում է Զորջթաունի հայկական փողոցի եռուզեռից հեռու: Սա Մադրասի առևտրական հին կենտրոնն է, որը ճանաչված է նաեւ «Չեննոյ» անունով: Մոտիկ է նավահանգստին, բազմամարդ է եւ կեղտոտ: Բայց բավական աշխույժ է եւ կենսունակ: Փողոցում որոշ առևտրականներ վաճառում են սանդալներ, գոտիներ, գլխարկներ, իսկ ատաղձագործները եւ այլ արհեստավորները ցուցադրում են իրենց վարպետությունը:

Ճռռացող փայտյա դռնից եկեղեցու տարածք մտնելով բացվում է բոլորովին տարբեր մի աշխարհ, որտեղ վանդակներում փակված թռչունների ծվվոցն է իշխում: «Հայերն այս եկեղեցին կառուցել են Մադրասի ֆրանսիական գրավման օրերին կործանված նախկին 1712կին կառուցված եկեղեցու փոխարեն, նույն վայրում, որտեղ նաեւ գերեզմանատունն էր», բացատրում է Մայքլը:

Մադրասի պատմության հայտնի վավերագրող Մուբիայի վկայությամբ, հայկականից բացի Մադրասում գոյություն են ունեցել նաեւ հրեական, պորտուգալական,

հոլանդական, ֆրանսիական եւ գերմանական համայնքներ: Հայերի մեծ մասը առևտրականներ են եղել կամ փախստականներ հիմնականում Պարսկաստանից, Սիջագետքից եւ Հայաստանից: «Առևտուրը (բամբակ, տեքստիլ, արժեքավոր քարեր, փայտանյութ, կանեփ, համեմունք) ծավալվել է դեպի Արեւմտյան եւ Արեւելյան Ասիա: Հայերը չափազանց հավատացյալ ժողովուրդ են եղել եւ առատաձեռնորեն նվիրաբերել են եկեղեցիներին», պատմում է նա: Ս. Աստվածածին եկեղեցին, որտեղ երգչախմբի համար հատուկ տեղ կա եւ նստարաններ՝ 130 հոգու համար, դեռնւս գործում է: Տարեկան չորսից վեց անգամ պատարագ է մատուցվում, երբ քահանա հոր ուղեկցությամբ այնտեղ են ժամանում մի խումբ հայեր Կալկաթայից, որտեղ այժմ 140 հայ կա: Մայքլն ինձ ցույց տվեց 1668կին տպագրված մեծ սուրբ գիրք, որն այդ առիթներով օգտագործվում է: «Հին ծիսակատարությունները կատարվում են նույն ձեւով: Ոչինչ չենք փոխել», ասում է նա:

Աստիճանավոր փայտյա խորանը զարդարված է Հիսուսի կյանքը պատկերող կտավներով: Զանգակատան փայտյա սանդուղքներով բարձրանալով, մենք տեսանք վեց հսկայական զանգեր, որոնցից երկուսը թվագրված 1837, բերված են Լոնդոնի «Ուայթչափել րեյ ֆաունդրի» գործարանից, որը հիմնականում զանգեր է պատրաստում անգլիական հայտնի Բիգ Բենի եւ Ֆիլադելֆայի «Լիբերտի րեյլի» համար:

Ամեն կիրակի առավոտյան Մայքլը երեք զանգերը հնչեցնում է միաժամանակ, դանդաղ եւ հանդիսավոր շնչով պատելով ամբողջ Մադրասը: Այստեղ՝ եկեղեցու բակում թաղված են մի քանի հեղինակավոր անձնավորություններ, որոնցից են հայր Հարություն Շնավոնյանը, մահացած 1824կին: Նա այդ վայրերում տպագրել է առաջին հայկական թերթը: Մայքլը նաեւ հպարտ է, որ անկախ Հայաստանի առաջին սահմանադրությունը գրի է առնվել Մադրասի հայկական համայնքում՝ 1781 թվին: Միայն 200 տարի անց անկախ Հայաստանի երազանքն իրականություն դարձավ:

Իսկ Մայքլի երազանքն է դարձյալ տեսնել հայկական ընտանիքների հոսք դեպի Մադրաս: «Չմայած ես երբեք ինձ մենակ չեմ զգում: Շարունակում եմ կատարել իմ պարտականությունները», ասում է նա ավելացնելով, որ իրենից բացի մեկ ուրիշ հայ էլ կա քաղաքում, որը եկել է պայմանագրով տեղի ռեզեփի խումբը մարզելու: Ըստ Մուբիայի, այդ մարդը պարզապես շարունակում է ավանդույթը, համաձայն որի արդեն 30և40 տարի հայերը գլխավոր դերակատարություն ունեն այդ մարզածեում: Քայքայված տներով հարուստ քաղաքի ընդհանուր տեսարանի վրա հայկական եկեղեցին ամուր է կանգնած եւ համապատասխան ֆինանսական միջոցներ ունի որոշակի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար: Իսկ Մուբիան գովաբանում է Մայքլին եւ նրա նախնիներին: «Մադրասի պատմության 100 տարին սերտորեն կապված է այն մարդկանց հետ, որոնք այդ եկեղեցուն պաշտամունք են կատարել: Նրանք հրաշալի գործ են կատարել՝ վառ պահելով հայկական ժառանգության այս կենտրոնը», ասում է նա:

## ՎԱԽՆԱՆՎԵԼ Է ՊԵՐԳ ԺԱՄԿՈՅԱՆԸ

Փետրվարի 23կին Մասաչուսեթսում մահացել է ամերիկահայ աշխարհառեչակ երգեհոնահար Պերճ Ժամկոյանը:

Նա եղել է ամերիկացի առաջին երգեհոնահարը, որը 1965 թ. համերգային շրջագայությամբ եղել է

Խորհրդային Միությունում: Համաշխարհային սինֆոնիկ նվագախմբի հետ նա ունեցել է մի շարք համերգներ: Նրա «Սուրբ սուրբը» եւ «Փուլենք» երգեհոնի համերգները «Նյու Յորք թայմս» թերթի կողմից ճանաչվել են բոլոր ժամանակների 50 լավագույն ձայնագրություններից մեկը: Պերճ ժամկոչյանն իր համերգային վերջին շրջագայությունը կատարել է 2003 թ. դեկտեմբերին այցելելով Իտալիա: Նա շքանշանների է արժանացել կարդինալ Աղաջանյանի, Վազգեն Ա կաթողիկոսի, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, Վենետիկի Մխիթարյան միաբանության եւ Հայաստանի նախագահի կողմից: 1970 թ. ժամկոչյանը ստեղծել է «Կոմիտաս» երգեհոնային հիմնադրամը, որի շնորհիվ Երեւանի մի շարք համերգադահլիճներ օժտվեցին երգեհոններով:

## Միջազգային

### ՔՐՐՔ ՔՐՐՔՐՐՅԱՆՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԼԻԱՐԴԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ 65ԵՐԿՆ Է

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 27 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աշխարհի մեծահարուստների ցանկը շարունակում է գլխավորել Մայկրոսոֆթի հիմնադիր 48ևամյա Բիլ Գեյթսը, որի կարողությունը գնահատվում է 46,6 միլարդ դոլար: Քրրք Քրրքրյանն անցյալ տարվա համեմատ հարստացել է 2 միլիարդ 600 միլիոն դոլարով: Անցյալ տարվա 97ևրդ տեղից նա այս տարվա միլիարդատերերի ցուցակում 65ևրդ տեղում է եւ ունի 6 միլիարդ դոլար: 1999ևին հայազգի մեծահարուստը 7 միլիարդ 300 միլիոն դոլար ուներ, որի համեմատ զգալիորեն պակաս է այս տարվա ունեցածը: Սակայն վերջին տարիներին կորուստներ են ունեցել գրեթե բոլոր միլիարդատերերը: Չի բացառվում, որ առաջիկայում Քրրքրյանը հարստանա եւս մեկ միլիարդով, եթե շահի դատը ներկայումս դատարանում լսվում է նրա հայցը ամերիկյան մի խոշոր ընկերության դեմ: Ի դեպ, միլիարդատերերի թվով առաջին տեղում Նյու Յորքն է՝ 31 մարդ: Մոսկվան 23 մեծահարուստով զբաղեցնում է 2ևրդ տեղը:

### ՊՈՒՏԻՆԸ ԽՍՐՄ ՓԼՈՒՋՈՒՄԸ ՀԱՄԱՐՈՒՄ Է «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ»

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Խորհրդային Միության փլուզումը որակել է «հսկայական մասշտաբի համազգային ողբերգություն», հաղորդում է Ինտերֆաքսը: «Ես կարծում եմ, որ նախկին ԽՍՐՄ եւ ԱՊՀ պետությունների շարքային քաղաքացիները դրանից (փլուզումից) ոչինչ չչափեցին՝ բախվելով հսկայական քանակի խնդիրների», ասել է Պուտինը: Ռուսաստանի նախագահն ընդգծել է, որ ԱՊՀ երկրների ինտեգրացման համար «կա ամեն ինչ, ինչը բացակայում է աշխարհի մյուս տարածաշրջաններում, որտեղ ընթանում են ինտեգրացիոն գործընթացներ»: Պուտինն ասել է, որ ռուսերենը շարունակում է մնալ ազգամիջյան շփումների լեզու, նախկին Խորհրդային հանրապետությունների քաղաքացիներն ունեն մենթալիտետի նմանություն, ընդհանուր պատմություն, անձնական կապեր:

## Հասարակական

### ՓԵՏՐՎԱՐԻ ԴԱՍԵՐՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԻՍ ՉԱՐԻԵԼՅԱՆ

Փետրվար ամիսը դարաբաղյան շարժման տարեգրության մեջ հազեցած է հաղթական ու ողբերգական իրադարձություններով: Եթե այս փաստը բնութագրական չդարձնենք Շարժման ողջ ընթացքի համար, համեմայն դեպս, կարող ենք հատկանշել իրադարձություններ, որոնք պատմության համար ընդգծված էջեր են:

1988ևի փետրվարի 13ևին Ստեփանակերտի գլխավոր հրապարակը դարձավ այն սկիզբը, որով ոչ միայն շարունակվեց ու գրվեց ազատագրական պայքարի տարեգրությունը, այլև առհասարակ՝ արձանագրեց Խորհրդային կայսրության փլուզման արշալույսը: Պատահական չէ, որ նախկին Խորհրդային Միության ղեկավարությունն անմիջապես արձագանքեց դարաբաղյան պոռթկմանը՝ զգալով, որ Ղարաբաղում ծայր առած ազգային-ազատագրական պայքարի կրակը կտեղափոխվի նաև միության այլ տարածքներ:

Դրանից մեկ շաբաթ հետո ԼՂ մարզային խորհուրդը վավերացրեց ժողովրդի ինքնորոշման կամքը: Պատմական այս ակտը եւս աննախադեպ էր կայսրության գոյության ողջ ընթացքում: Անմիջապես տարածաշրջան, մասնավորապես Ստեփանակերտ աճապարեցին քաղբյուրոյի անդամները, որոնց ներկայությունը ոչնչով չկարողացավ ազդել ժողովրդի ընթոստության վրա: Փոխարենը՝ նրանց գալուստն ավելի ոգելորեց Ադրբեջանի ազգայնական ուժերին՝ վերջիններիս մեջ արթնացնելով վայրենի բնազդը:

Այսօր քչերն են հիշում փետրվարի 22ևը, երբ բազմահազար զինված ադրբեջանցիներ հարձակվեցին խաղաղ Ասկերան ավանի վրա: Ըստ էության, դա Սունգայիթի նախերգանքն էր, որը կասեցվեց միայն ասկերանցիների ու նրանց օգնության եկած ստեփանակերտցիների համատեղ ուժերով: Այդ օրն առաջին անգամ ուղիղ նշանառությամբ հրացան կրակեց, եղան զոհեր հարձակվողների կողմից: Եթե դա տեղի չունենար, անխուսափելի կլիներ եղեռնը, եւ գուցե թե դրանով իսկ խեղդվեր դարաբաղյան շարժումը, ինչը ոչ միայն Ադրբեջանի, այլև պաշտոնական Մոսկվայի գաղտնի մտադրությունն էր: Դրա մասին կարելի է վստահաբար ասել, որովհետեւ ասկերանյան առճակատման օրը քաղբյուրոյի երկու անդամներ գտնվում էին Ստեփանակերտում եւ հրապարակում հավաքված ժողովրդի առաջ կանգնած՝ լկտիաբար հերքում էին նույն այդ պահին Ասկերանում տեղի ունեցող բախումները:

Ասկերանում ադրբեջանցին ջարդ կրեց, սակայն դրանով ավելի գազազեց: Փետրվարի 26-ին, Ղարաբաղից հարյուրավոր կիլոմետրեր հեռու, սկսվեց սունգայիթյան եղեռնը: Այն ծավալուն դարձավ հաջորդ օրը եւ տեւեց երեք օր, որի ընթացքում ո՛չ տեղական իրավապահները, ո՛չ էլ այդ նպատակով Սունգայիթ բերված խորհրդային ներքին զորքերը չմիջամտեցին, չփորձեցին մարել ազգամիջյան մեծ հրդեհի բոցը: Եվ դա յուրօրինակ խրախուսանք էր արյունռուշտ ելուզակների: Այդպես է, որովհետեւ դրանից հետո կենտրոնական հեռուստատեսությամբ հանդես գալով, միութենական դատախազության ներկայացուցիչ Կատուսեւը, որը եղեռնի օրերին գործուղվել էր Սունգայիթ, առանց ամոթի նշույլի աղավաղելով այնտեղ տեղի ունեցածի իսկությունը, հերքեց ամենը հայերի կոտորածը: Այսօր էլ սունգայիթյան ոճիրն իր նորօրյա դրսեւորումներն ունի. Բուդապեշտում հայ սպայի դավադիր սպանությունը ոչ այլ ինչ է, քան վայրենի բնազդի վերարթնացում ադրբեջանական գեմի մեջ, ինչը պետք է արժանի գնահատական ստանա միջազգային հանրության կողմից:

1992-կի փետրվարի 26-ին հայ զորականները ոչնչացրին Խոջալուում տեղակայված կրակակետը: Այս իրադարձությունն ադրբեջանցիները նույնպես աղավաղված են ներկայացնում իրենց պատմության մեջ սեւ օր արձանագրելով Խոջալուն: Եթե դա իրոք ադրբեջանցիների համար սեւ է, ապա լոկ այն իմաստով, որ փոքրաթիվ ղարաբաղյան ջոկատը կարողացավ ոչնչացնել հսկայական հիդրային, նրան, որն ամիսներ շարունակ ահուդողի մեջ էր պահում շրջակա հայկական բնակավայրերը, այդ թվում՝ Ստեփանակերտը: Ամեն օր հարյուրավոր արկեր ու հրթիռներ էին արձակվում Ասկերանի, Նորագյուղի, Մեհտիշենի, Բալուջայի, Խանածախի ու Ստեփանակերտի վրա՝ ավերածությունների ենթարկելով բնակավայրերն ու զոհեր պատճառելով խաղաղ բնակչությանը: Երբեւէ ադրբեջանական քարոզչությունը փորձ արե՞լ է արձանագրելու այս փաստը, նշե՞լ է, որ ընդամենը երեք տարվա ընթացքում Խոջալու գյուղի բնակչությունը եռապատկվել է: Կարելի է մտածել, թե ադրբեջանական էթնոսի վերարտադրությունը զինեսյան ներունակություն ունի՞: Բնավ, Խոջալուի ծավալային աճը տեղի է ունեցել միայն գերվերաբնակեցման հաշվին, այն վերաբնակիչների, որոնք բախի ու քլունգի փոխարեն իրենց հետ բերել էին հրագեն ու ռազմամթերք: Եթե խոսվում է «Խոջալուի ողբերգության» մասին, ապա այսօրվա Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը պետք է նկատի ունենա նաեւ վերոհիշյալ փաստը:

1994-կի փետրվարին եղավ Օմարի լեռնանցքի հաղթական ճակատամարտը: Ադրբեջանական բանակի սուր ատամները ջարդվեցին Մռավ սարի լանջերին: Սա էլ յուրօրինակ դաս է, եւ եթե մեր հարեւաններն իրոք դրանից ինչևոր դաս քաղել են, ապա դրա ամբիջական

արդյունքը, թերեւս, ամիսներ հետո իրենց իսկ խնդրանքով հաստատված հրադադարն է, որը շարունակվում է մինչեւ այսօր:

## ՍՊԱՆԴ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

16 տարի առաջ այս եւ հաջորդ մի քանի օրերին Ադրբեջանի Սունգայիթի Բարեկամության եւ Եղբայրության փողոցներում գազազած ամբոխը կոտորում էր քաղաքի հայ բնակչությանը. 1988 թ. փետրվարի 26-29-ը 32 անմեղ (նրանց միակ մեղքը հայ լինելն էր) հայեր սպանվեցին, եւս հարյուրավորները վիրավորվեցին: Սունգայիթի 14 հազար հայ բնակչությունը, չցանկանալով դառնալ ադրբեջանական հրոսակների զոհը, մի քանի օրում հեռացավ քաղաքից: ԽՍՀՄ առաջնորդ Գորբաչովը հայկական կոտորածները որակեց «խուլիգանական գործողություններ»:

Քաղբյուրոյի ավագ պաշտոնյաներից Գեորգի Խարչենկոն, որը 1988-89 թթ. եղել է Կովկասում, բրիտանացի լրագրող Թոմաս դը Վաալին հետագայում ասել է. «Չեմ ուզում ցույց տալ լուսանկարները, պարզապես դրանք ես ոչնչացրել եմ: Բայց իմ աչքերով եմ տեսել (հայերի) անդամահատված մարմինները, կացնով այլանդակված ձեռքեր, ոտքեր: Նրանք (ադրբեջանցիները) հավաքում էին չորացած տերեւները, շաղ տալիս դիակներին, բենզին լցնում եւ հրդեհում: Սարսափելի դիակներ էին»:

Վաալն իր «Սեւ այգի» գրքում պատմում է, որ Սունգայիթում հակահայ ցույցերը, ապա հայերի սպանող շարունակվեցին 3 օր: «Նույն երեկոյան (փետրվարի 27) ԽՍՀՄ զինվորական դատախազ Կատուսեւը, որ Ադրբեջանում էր, ելույթ ունեցավ ազգային հեռուստատեսությամբ եւ Բաքվի ռադիոյով... Նա հայտարարեց, որ 5 օր առաջ Ասկերանում երկու երիտասարդներ են սպանվել՝ տալով նրանց ակնհայտ ադրբեջանական անունները: Կատուսեւը լուցկին մոտեցնում էր վառողի տակառին», գրում է բրիտանացի լրագրողը:

Այն, ինչ տեղի ունեցավ հաջորդ օրը, աննախադեպ էր ԽՍՀՄ պատմության մեջ: «Մի քանի տասնյակից մինչեւ հիսուն հոգանոց ավազակախմբերը ջարդուփշուր էին անում (տների) ապակիները, հրդեհում ավտոմեքենաները, փնտրում հայերի: Սունգայիթի մի քանի թաղամասեր (հիմնականում Եղբայրության եւ Խաղաղության փողոցները) վերածվել էին պատերազմական գոտու... Ավազակախմբերն իրականացնում էին դաժանությամբ զարհուրելի գործողություններ: Մի քանի զոհեր այն աստիճանի էին

այլանդակվել կացնի հարվածներից, որ նրանց մարմիններն անհնար էր ճանաչել», գրում է Վաալը:

Ադրբեջանական քարոզչությունը ջարդերից 16 տարի հետո էլ փորձում է հանրությանը համոզել, թե իբր Սումգայիթի պատասխանատուն ՊԱԿն է, Գորբաչովը, անգամ հայերը: Ադրբեջանում ամենահայտնի հայատյաց Զիա Բունիաթովը «Ինչո՞ւ Սումգայիթը» հոդվածում եզրակացնում է, որ սումգայիթյան ջարդերն իրենք՝ հայերն են կազմակերպել, որպեսզի վարկաբեկեն ադրբեջանցիներին եւ թափ տան հայկական ազգայնականությանը:

1990ական թթ. սկզբներին կինոբեմադրիչ Դավուդ Իմանովը «Սումգայիթի արձագանքը» ֆիլմում Սումգայիթի ջարդերի մեջ մեղադրում է հայերին, ռուսներին եւ ամերիկյան հատուկ ծառայություններին:

Թոմաս դը Վաալը նկատում է, որ եւ Բունիաթովը, եւ Իմանովն օգտագործել են Էդուարդ Գրիգորյան անունով մեկին, որն իբր մասնակցել է հայերի ջարդերին: Գրիգորյանը, որի մայրը ռուս էր եւ հայ ամուսնուց բաժանվել էր վաղուց, դատապարտվեց 12 տարվա բանտարկության՝ Սումգայիթի ջարդերը կազմակերպելու մեղադրանքով: Նույն մեղադրանքով ձերբակալվել էին 84 հանցագործներ, որից 82ն ադրբեջանցի, մեկը՝ ռուս:

Չետագա տարիներին հայկական ջարդերը շարունակվեցին Կիրովաբադում, Բաքվում, իսկ ջարդարարներին Ադրբեջանի իշխանությունները եւ հասարակությունը հերոսացրին: Հայկական ջարդեր Ադրբեջանում եղել են նաեւ Բաքվում՝ 1905 եւ 1918 թթ., ընդ որում՝ 20կողմ դարասկզբին հայ սպանվածների թիվը հարյուրավոր անգամ մեծ էր, քան Սումգայիթում, Կիրովաբադում եւ Բաքվում: Սակայն վերջին հայկական կոտորածներն ուշագրավ են նրանով, որ իրականացվեցին Խորհրդային Միության գոյության տարիներին:

Թոմաս դը Վաալի «Սեւ այգին», որ մինչ օրս դարաբաղյան պատերազմի մասին գրված լավագույնն է անաչառ գրքերից է, Սումգայիթի ջարդերին վերաբերող հատվածում ասում է. «Սումգայիթի բոլոր հայերը ցանկանում էին հեռանալ Ռուսաստան, բայց ոչ Հայաստան... Նրանք ուզում էին մեկնել Կրասնոդար, Ստավրոպոլ կամ Ռոստովի շրջան: Ինչո՞ւ: Նրանք ասում էին, թե ոչ մեկը Հայաստանում մեր կարիքը չունի, Հայաստանում մեզ չեն համարում իսկական հայեր, մենք իսկական հայեր չենք»:

Նրանք միշտ կենդանի են մեր հոգում: Եվ յուրաքանչյուր հայ պարտավոր է հիշել ու գլուխ խոնարհել նրանց հիշատակի առաջ, քանի որ այդ սրբերի ճգնությամբ եւ նահատակությամբ մեր ժողովուրդը հավատարիմ մնաց մեր Փրկչի երկնային վարդապետությանն ու հարատեւեց դարեր:

Փետրվարի 22-ին նշվում է բուն Բարեկենդանի տոնը: Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն, ուրախություն, վայելք: Բուն Բարեկենդանը ժողովրդական տոնախմբության, խրախճանքի օր է: Այդ տոնը նշվում է նաեւ Ռուսաստանում եւ եվրոպական երկրներում: Տոնին նախորդող շաբաթ երեկոյան՝ ժամերգության ընթացքում վարագուրվում է եկեղեցու խորանը եւ այդպես մնում մինչեւ Մեծ պահքի ավարտը:

Փետրվարի 23-ից սկսվում է Մեծ պահքի շրջանը եւ տեւում է 48 օր՝ բուն Բարեկենդանից մինչեւ Ս. Հարության (Զատիկի) տոնը, որն այս տարի կնշվի ապրիլի 11-ին: Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծազում ունեցող մթերք: Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլեւ մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայիոյանքից եւ այլ մեղքերից:

Մարտի 17-ին Մեծ պահքը կիսվում է կոչվում է միջինը: Ժողովրդական սովորության համաձայն, այդ օրը բաղարջից պահոց գաթա են պատրաստում, որի մեջ մետաղադրան են դնում: Ուն որ բաժին հասնի մետաղադրանը, տարին նրա համար հաջողություններ է բերում:

## ՔԱՐԱՅՈՒՆԶ. ԱՇԽԱՐՀԻ 8-ՐԴ ՅՐԱՇԱԼԻՔ

Ավելի քան 7,5 հազար տարի առաջ ներկայիս Հայաստանի տարածքում կառուցված, աշխարհում նմանակը չունեցող Քարահունջի աստղադիտարանը հիրավի կարող է համարվել աշխարհի Ցևրո հրաշալիքը: Չէ որ նույնիսկ ամենահինը համարվող շումերական եւ եգիպտական քաղաքակրթությունները ծագել են «ընդամենը» 5և5,5 հազար տարի առաջ: Այսինքն, մեր՝ հայերիս նախնիներն առնվազն 2000 տարի նրանցից առաջ ունեցել են քաղաքակրթություն, որի մակարդակն աստեղային հետազոտությունների էր ուղղված:

Առաջին հայացքից սենսացիա թվացող այս փաստի հայտնագործողն ու հեղինակն է հանրահայտ գիտնական, ակադեմիկոս Պարիս Յերունին, որի անունն անգամ թույլ չի տալիս որեւէ անճշտություն ենթադրել բերվող փաստարկների շարքում: Ասենք ավելին՝ համաշխարհային անուն եւ հեղինակություն ունեցող բոլոր խոշոր աստղագետներն ու պատմաբանները գլուխ են խոնարհում ակադեմիկոս Յերունու փաստած ապացույցների առջեւ՝ առանց առարկությունների ընդունելով թե Քարահունջի աստղադիտարանի սենսացիոն տարիքը (7,5 հազար տարի) եւ թե այն փաստը, որ ամբողջ աշխարհում նմանը գոյություն չունի

## Մշակույթ

### ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Փետրվարի 19-ին Հայ առաքելական եկեղեցին տոնում է Վարդանանց սուրբ նահատակների հիշատակի օրը: Վարդանանց պատերազմից անցել են դարեր, բայց

ու ամենահին պատմությունն ունեցող համանման պատմական հուշարձանները շատ ավելի «երիտասարդ» են Քարահունջից: Առնվազն 2 հազար տարով...

Քարահունջ բառը կազմված է քար եւ հունջ (հնչել) բաղադրիչներից, այսինքն՝ նշանակում է «հնչող, արձագանքող, խոսող» քարեր:

Քարահունջում համարակալել են 223 քար, դրանցից 84ն ունեն անցքեր, որոնք ուղղված են հորիզոնի տարբեր կետերի, իսկ մի մասը՝ դեպի երկինք: Դեռ առաջին գիտարշավի ժամանակ (1994 թ.) հայտնաբերվել են զարմանալի աստղագիտական գործիքներ, անցքեր ունեցող առանձին քարեր կամ երկուներեք քարից կազմված խմբեր, որոնք յուրահատուկ տեխնիկաներ են աստղադիտակների, որոնցով դիտելի են Արեւը, Լուսինը, աստղերը՝ կրկնելով այն ուղին, որ հազարամյակներ առաջ անցել են մեր նախնիները: Նրանք մեծ ճշտությամբ կարողացել են որոշել լուսատուների դիրքերը եւ շարժումները:

Քարահունջի հզոր աստղադիտարանի առկայությունը վկայում է, որ այդ շրջանում արդեն գոյություն ունեցել են ոչ միայն հայկական գրեր, թվեր, ճշգրիտ գիտություններ, այլեւ կայուն պետականություն եւ կարգ ու կանոն: Այլ կերպ լինել չէր կարող աստղագիտությամբ զբաղվելու համար այդ հետազոտությունները, չափումներն ամրագրելու համար պետք է գիր լիներ, թիվ լիներ, կազմակերպված պետություն, որ այդ նվաճումները պաշտպանված լինեին: Մեր նախնիները կարողացել են ոչ միայն շատ մեծ ճշգրտությամբ չափումներ կատարել, այլեւ կարելոր հետազոտություններ անել:

Եվ այսպես, փաստում ենք՝ Քարահունջի աստղադիտարանը մի բացառիկ, աշխարհում նմանակը չունեցող պատմական եւ գիտական երեսույթ է: Սա անվիճելի է:

Եվ երեւի թե միայն Հայաստանում է հնարավոր այդքան սառնասրտորեն վերաբերվել այն փաստին, որ մեր տարածքում նման պատմական եւ գիտական գերարժեք ունեցող հուշարձան գոյություն ունի: Ասում ենք՝ սառնասրտորեն, որովհետեւ մի պահ հանկարծ կարելի է պատկերացնել, թե ինչպես կվարվեին, ասենք, Ամերիկայում կամ Եվրոպայում նման հուշարձան հայտնաբերելու դեպքում: Կասկածից վեր է, թե ինչ բարձր մակարդակի զբոսաշրջության կենտրոն կդարձնեին: Կարող եք դուք էլ փորձել պատկերացնել...

Թե ինչպես 7500 թվամիջը դառնում է զանազան հուշանվերների շահագործման ամենաընդունված խորհրդանիշը...

Թե ինչպես են թերթերում եւ հեռուստատեսությամբ լուսաբանվում այս կամ այն խոշոր միջազգային գիտարշավների աշխատությունները Քարահունջ այցելության հետքերով...

Թե ինչպես են բոլոր տուրիստական ավանդական երթուղիները տանում դեպի Քարահունջ...

Դե ի՞նչ կա երեւակայելու: Հանրահայտ Սթոունհենջ տարեկան այցելում են ավելի քան 2 մլն զբոսաշրջիկներ ամբողջ աշխարհից: Իսկ այդ անգլիական հուշարձանաստղադիտարանը Քարահունջից առնվազն 2,5և3 հազար տարով «երիտասարդ» է:

Չետաքրքրական է նաեւ այն փաստը, որ նման գիտական ներուժ ունեցող ազգն այսօր թերեւս չի դասվում աշխարհի զարգացած երկրների շարքին: Երեւի թե դա հայերիս գենետիկորեն է եկել՝ չկարողանալ մեզ ժառանգված արժեքներն օգտագործել սեփական երկրի, ժողովրդի բարգավաճման եւ զարգացման համար:

Ս. Ս.

## **ԵՊՂ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

*Ամերիկյան որոշ «հայագետներ», հաշվի չառնելով Հայաստանի և հայ ժողովրդի համար ներկայումս ստեղծված դժվարին ու վտանգավոր կացությունը, իրենց «վերլուծություններով» և «եզրահանգումներով» ջուր են լցնում Թուրքիայի և Ադրբեջանի վայ-պատմաբանների և իշխանությունների ջրաղացին (Նինա Գարսոյան, Ջեյմս Ռասսել, Ռոնալդ Սյունի, Ռոբերթ Թոմսոն, Լևոն Ավդոյան, Ռոբերթ Հյուսն և ուրիշներ):*

2001թ. դեկտեմբերի 19-ին տեղի ունեցավ Երևանի Պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի նիստը, որն անդրադարձավ վերջին շրջանում Հայաստանի մամուլում տպագրված այն հրապարակումներին, որոնցում բարձրացվել են միջազգային հայ պատմագիտությանը վերաբերող տագնապահարույց մի շարք հարցեր: Ամբիոնի անդամները նշեցին, որ, ծանոթանալով վերջին տարիների արտասահմանյան հայագիտական հրապարակումներին, մեզանում համոզմունք է ձևավորվում, որ ներկայումս միջազգային հայ պատմագիտության բնագավառում ստեղծվում, բավականին վտանգավոր կացություն, որը բնորոշվում է հետևյալ պարագաներով.

ա) ԱՄՆ-ի դաշնակից Թուրքիայի հակահայկական քարոզչուհությունը բացասական խոր ազդեցություն է գործել հատկապես ամերիկյան հայագիտության վրա, որի ներկայացուցիչները տևական ժամանակ է՝ բացեիբաց աղճատում, մեղափոխում են հայոց անցյալի համարյա բոլոր էտապների՝ հին և միջնադարյան, նոր և նորագույն պատմության կարևոր շատ հարցեր:

բ) Ամերիկյան որոշ «հայագետներ», հաշվի չառնելով Հայաստանի և հայ ժողովրդի համար ներկայումս ստեղծված դժվարին ու վտանգավոր կացությունը, իրենց «վերլուծություններով» և «եզրահանգումներով» ջուր են լցնում Թուրքիայի և Ադրբեջանի վայ-պատմաբանների և իշխանությունների ջրաղացին (Նինա Գարսոյան, Ջեյմս Ռասսել, Ռոնալդ Սյունի, Ռոբերթ Թոմսոն, Լևոն Ավդոյան, Ռոբերթ Հյուսն և ուրիշներ): «Անաչառ» գիտականության, իրականում քաղաքական պատեհապաշտու-շտույթ ան սկզբունքներով առաջնորդվող այս անձինք, որքան էլ թյագրմանալի է, անգամ Հայոց ցեղասպանության հարցում սկսել են աստիճանաբար որդեգրել ու քարոզել թուրքամետ տեսակետներ: Եվ դա այն դեպքում, երբ

ներկայումս հայոց պետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկն է՝ հասնել այն բանին, որ համաշխարհային հասարակայնության կողմից դատապարտվի հայության նկատմամբ թուրքերի գործած արյունալի ոճիրը:

զ) Չափազանց տարօրինակ է, որ ամերիկյան այս կարգի «հայագետների» ֆինանսավորումն ապահովում, նրանց հեղինակությունն ամեն կերպ բարձրացնում են սփյուռքահայ կառույցներն թյունն ու անհատները, որոնց թափած ջանքերը բնավ չեն փոխ- ոխս առուցվում:

դ) Ամերիկյան այս կարգի «հայագետների»՝ հայոց պատմության դեմ ձեռնարկած երկարամյա ոտնձգություններն ըստ ամենայնի հակահարված չեն ստացել Հայաստանի և սփյուռքի գիտական շրջաններից, չեն արժանացել պատմաբաններ էրի միահամուռ դատապարտմանը: Այդ է պատճառը, որ նսթափվելու և սխալները վերանայելու, կանխակալ և թուրքամետ դիրքորոշումներից հրաժարվելու փոխարեն անդրօվկիանոսյան «հայագետները» ընտրեցին մեկ այլ ուղի. 1. լռեցնել ցանկացած քննադատություն (նկատի ունենալով հատկապես Արմեն Այվազյանի և Արմեն Պետրոսյանի վերջին շրջանի բարձրարժեք ուսումնասիրությունները), այդ կերպ փորձել են ահաբեկել իրենց տեսակետները չբաժանող գիտնականներին՝ անմիջապես պիտակավորելով նրանց «նեղմիտ ազգայնամուլներ», «դիլետանտներ», «հնտելեկտուալ տեռորիստներ» ու նմանատիպ այլ որակումներով և հաստատականորեն շարունակել նույն վնասակար ուղեգիծը, 2. վարկաբեկել հայաստանյան հայագիտական դպրոցը, հայտարարել «Հայաստանում բունհաթովական

դպրոցի բարգավաճման», հայրենի գիտնականների՝ «տգետ ու խելագար», «շովինիստական» տեսակետներ որդեգրելու մասին, իսկ ՀՀ ԳԱԱ-ն անվանել «մեռելածին» կառույց:

ե) Նշված հայագետների ծավալած գործունեության նկատմամբ հայ գիտական հասարակայնության չեզոքությունն ու անտարբերությունն անթույլատրելի է ու վնասաբեր: Պատահական չէ, որ կեղծ-հայագիտական տեսակետներն անդրօվկիանոսյան արդեն թափանցել են Եվրոպա, Ռուսաստան և Մերձավոր սից Արևելք (ի դեմս Հայկազյան համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Արա Սանջյանի «գիտական» գործունեության):

Վերջերս սանկտ-պետերբուրգի պատմաբան Կարեն Յուզբաշյանը փորձ արեց հայաստանցի մասնագետներին ներգրավել «Արցախ-Ղարաբաղը որպես առանձին պատմամշակութային երևույթ» քաղաքականապես վտանգավոր և, ըստ երևույթին, օտար ափերից թելադրված մի ծրագրի իրականացման մեջ: Հայաստանում վերջին տարիներին սոցիալ-տնտեսական ծանր

պայմանների հետևանքով մեծապես նոսրացել են երբեմնի պատկառելի հայագիտական դպրոցի ներկայացուցիչների շարքերը, իսկ հայագետների նոր սերունդը պատրաստելու ասպարեզում տիրում է տազնապալի վիճակ, քանզի հանրապետությունում ֆինանսական անապահովությունը հնարավորություն չի տալիս ընտրելու խոստումնալից երիտասարդների և նրանց կրթելու Հայաստանի հայագիտության անցյալի փառավոր ավանդույթների ոգով: Գերազանցապես հենց այս երկու հանգամանքից են ներկայումս օգտվում անդրօվկիանոսյան «հայագիտությունը» գրեթե

միանձնյա տնօրինող ամերիկյան հայագիտական «դպրոցի» ներկայացուցիչները, որոնք աշխարհով մեկ հնչեցնում են հայերի և հայկական պատմության շուրջ հորինված կեղծ ու ստապատիր տեսակետներ: Դա պատահական չէ, քանզի այդ «դպրոցն» առ այսօր չունի գիտական որոշակի մակարդակ և զբաղված է զանազան անհեթեթ վարկածների մտավարժանքով: Ամբիոնում ծավալված մասնագիտական բուռն քննարկման ընթացքում նշվեց, որ ամերիկյան հայագիտությունը, առանց Հայաստանի պատմագիտական մտքի ձեռքբերումների լայն օգտագործման, ինչպես մինչ այժմ է եղել, հետայսու նույնպես

անհուսալիորեն դատապարտված է ընթանալու խոտոր ճանապարհներով: Ընդգծվեց նաև հայաստանյան հայագիտությունը ֆինանսական ծանրագույն վիճակից շուտափույթ դուրս բերելու, հանրապետությունը որպես հայագիտության հզորագույն կենտրոն պահելու ռազմավարական անհրաժեշտությունը: Խորապես մտահոգ ԱՄՆ-ի «հայագիտական» կենտրոններում տարվող հայավնաս գործունեությամբ, Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնը միաձայն որոշում է


1. Խնդրանքով դիմել սփյուռքի հայագիտական կենտրոնները ֆինանսավորող հաստատություններին և անհատներին՝ հետամուտ լինել, թե ինչպիսի արդյունավետությամբ են օգտագործվում այդ կենտրոնների աշխատողներին հատկացված վում միջոցները՝ հայանալստ, թե՞ հայավնաս և, դրանից ելնելով, լուծել նրանց հետազոտությունների ֆինանսավորման հետ կապված հարցերը:

2. Անընդունելի համարել կեղծ-հայագիտության նկատմամբ Հայաստանի և սփյուռքի որոշ գիտնականների չեզոք դիրքը՝ որպես վտանգավոր մոլորություն:

3. Առաջարկել ՀՀ Կառավարությանը՝ ա) Արագ և գործուն միջամտությամբ բարելավել հայագիտության՝ ռազմավարական առումով կարևորագույն այս բնագավառի նյութական ապահովումը:

բ) Ստեղծել հայրենի հայագիտության զարգացման հատուկ հիմնադրամ, որն ի վիճակի լինի գիտական աշխատանքի համար գոնե նվազագույն պայմաններ ապահովել գործող կադրերը պահպանելու, նրանց հնարավորությունները լիովին օգտագործելու, ինչպես նաև հայագիտության ասպարեզ մուտք գործող երիտասարդներից նոր հերթափոխ պատրաստելու համար:

գ) Հայագիտության անխոտոր զարգացման համար ստեղծել Հայագիտական հետազոտությունների համաշխարհային ակադեմիա, որի կենտրոնը գտնվի Երևանում՝ զերծ օտար քաղաքական ազդեցություններից:



## **ԻՍՊԱՌԻ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆՔ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻՆ ՊՏԵՆԼՈՒ ՎԵՐՁԻՆ ՀՈՒՅԱԸ**

Թե ինչ եղավ այն բանից հետո, երբ 1848-ին հայ մեծ լուսավորիչ, նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը առավոտյան դուրս եկավ տնից եւ անհետացավ, ոչ ոքի հաստատ հայտնի չէ: Վարկածները շատ են, շատ դեպքերում էլ՝ իրարաներժ: Հենց առաջին օրվանից տարածվեց, թե ինքնասպան է եղել, այնուհետեւ՝ ընկել է Ջանգուն, կամ էլ՝ Սիբիր են արքայաբերել: Սրանք լոկ վարկածներ են: Եվ ըստ պատմաբան Վարչամ Ավետյանի, ճշմարտությունը թաքցնելու համար են հորինվել այդ ամենը:

«1947 թ. ես (Վ. Ավետյանը Կ. Գ.) սովորում էի Երեւանի էներգետիկ տեխնիկումում, եւ մեր պատմության դասատու Արտո Ղազարյանը, որ միաժամանակ տեխնիկումի ուսնասվարն էր, Խ. Աբովյանի մասին պատմելիս ասաց, որ Աբովյանի անհետացման կամ էլ Սիբիր արքայաբերելու մասին պատմությունները հորինված ստեր են: Նա ասաց, որ Աբովյանին թուրքերն են սպանել, իսկ այդ մասին կարող է պատմել Մեհտի անունով մի թուրք: Բայց մենք Մեհտի տեղը չգիտեինք: Ղազար անունով մի մարդ կար, հեքիաթասաց էր, Բոշի այգում էր լինում, նա գիտեր այդ թուրքի տեղը: Գնացի, պայմանավորվեցի, որ գնայինք այդ թուրքին տեսնելու, եւ հանկարծ այդ Ղազարը մահացավ, եւ մենք Մեհտիի հետքը կորցրինք»:

Եվ ահա, սա էլ պատճառ դարձավ, որ պատմաբան Վարչամ Ավետյանը գնա ու գտնի այն մարդկանց, ովքեր այս կամ այն կերպ առնչվել են Աբովյանի անհետացմանը: Ու տարիներ անց՝ արդեն 1986-ին Ավետյանը պատահաբար հանդիպում է Հմայակ Գասպարյան անունով մեկին, որն էլ տեղեկացնում է, որ ոմն Գուրգեն Սարդարյան ցանկություն ունի պատմելու այն ամենը, ինչ գիտի Աբովյանի մասին, որ լսել է Շաֆի բեկի տղայի՝ Մահմադ բեկի տանը: «Գուրգեն Սարդարյանը նշանակվել էր այնտեղ նախկին ՊԱԿ-ի կողմից հսկելու Մահմադ բեկին, որովհետեւ նա թուրքական լրտես էր»:

Նշեմ, որ Խ. Աբովյանի սպանությանն առաջին անգամ անդրադարձել է 1911 թ. Էջմիածնի միաբանության անդամ, Գեորգյան ճեմարանի շրջանավարտ Ներսես քահանա Տերևկարապետյանը՝ իր «Խաչատուր Աբովյան» ճեմարանական ատենախոսության ժԳ գլխում: Նա սպանության մասին տեղեկությունները քաղել էր ինչպես արխիվներից, այնպես էլ Աբովյանի մտերիմների ու հարազատների պատմածներից: Պատմաբան Լեւոն Տիգրանյանը երկրորդ հեղինակն էր, որ Աբովյանի սպանության մասին հանդես եկավ հրապարակավ՝ Աբովյանի կենսագրությունը գրելու առիթով: Աբովյանի սպանության մասին գրել է նաեւ Հայկ Տերևստվածատրյանը: Իսկ Վարչամ Ավետյանն իր հետաքննությունը սկսել է վերոհիշյալ Գուրգեն

Սարդարյանի եւ Իգդիրում ծնված Դրաստամատ Սաֆարյանի պատմածներից: Գ. Սարդարյանը հայտնում է Վարչամ Ավետյանին, որ այն տունը, որտեղ կատարվել է եղեռնագործությունը, Այգեստան թաղամասում է՝ Շաֆիբեկովի անվան փողոցում (այսօր՝ Մարտի 8 անվան): Այն նախկինում ձգվել է «Մամուռ» կոչվող ջրանցքին զուգահեռ, ներկայիս ռադիոտունից մինչեւ «Հանրապետական» մարզադաշտ: Այդ տարածքը կազմում էր հինում «Դամի բուլաղ» կոչվող թաղի մի մասը:

Պատմաբան Վարչամ Ավետյանն այդ ամենը համակարգում է ու ապացուցում, որ Աբովյանին իսկապես թուրքերն են սպանել. «Ամենը կատարվել է Շաֆի բեկի տանը: Նա Երեւան-Նախիջեւան տարածաշրջանի հաշտարար դատավորն էր: Նրա երկու երեխաներին՝ Աբասին ու Մահմադին Աբովյանը մասնավոր դասեր էր տալիս: Եվ Շաֆի բեկը, որ այն ժամանակվա չինովնիկներից էր, ըստ երեւոյթին թղթախաղով տարվում է եւ տունը, եւ այգին (Այգեստանը եղել է Շաֆի բեկի այգին), ինչպես նաեւ կնոջը՝ գեղեցկուհի Սուրային գրավ է դնում, ինքը գնում է Պարսկաստան՝ փող ճարելու: Այդ ընթացքում պարտատերերը գալիս են եւ ստիպում, որ պարտքերը վերադարձնեն, այլապես շատ անախորժ բաներ կլինեն: Կինը ստիպված խնդրում է իրենց վարժապետին օգնելու, եւ Աբովյանը նրանց 1000 ռուբլի է տալիս: 1848 թ. մարտի 9-ին Աբովյանն ազատվում է Երեւանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնից եւ նշանակվում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ: Թիֆլիս տեղափոխվելու կապակցությամբ պահանջում է պարտքերը: Շաֆի բեկը եւ նրա շրջապատը նշված պարտքը չցանկանալով վերադարձնել՝ հորինում են, որ իբր Աբովյանը «գաղտնի» կապերի մեջ է եղել Շաֆի բեկի կնոջ՝ Սուրայի հետ, եւ, մահմեդական սովորույթի համաձայն, Աբովյանի նկատմամբ կատարում են անմարդկային դատ: Պարտքերը չվերադարձնելու համար Աբովյանը Շաֆի բեկին դատի է տալիս: Դատը պիտի կայանար 1848 թ. ապրիլի 2-ին: Ապրիլի 1-ին Շաֆի բեկը Աբովյանին կանչում է իր տուն եւ պայմանավորվում, որ մինչեւ դատի սկսվելը Աբովյանը ցուցմունք տա, որ այդ գումարը ստացել է, որովհետեւ անպատվություն էր հաշտարար դատավորի համար պարտք ունենալը: Եվ այդ գրույցի ընթացքում էլ պայմանավորվում են, որ ապրիլի 2-ին լուսադեմին՝ մինչեւ դատի սկսվելը պարտքը կտա: Առավոտյան կառքով Աբովյանին իր տնից (ներկայիս Սպայի տուն) բերում են, ու բերելուն պես Շաֆի բեկի հարազատներից Ասադ բեկը, Իսկանդարովը եւ ծառաները Աբովյանին սպանում են եւ թաղում այգու խորքում»:

Այսօր Շաֆիբեկովների այգուց ոչինչ չի մնացել: Տարիների ընթացքում տարածքը կառուցապատվել է, նույնիսկ կտրվել է այն ընկուզենին, որի տակ թաղել են Աբովյանին, ծառի տեղում այսօր ավտոտնակներ են: Ժամանակին ՀԳԱԱ նախագահ Վ. Համբարձումյանի

կարգադրությամբ ստեղծվել էր հանձնախումբ, որը պիտի գրավեր աճյունը գտնելու աշխատանքներով: Սակայն այդ աշխատանքները ձախողվեցին, երբ խորհրդային կարգերը փլուզվեցին, իսկ նոր կարգերի օրոք արդեն մանաստիպ աշխատանքների համար գումար չկար:

Բայց օրեր առաջ տեղի բնակիչները հայտնեցին, որ ինչևոր մեկը հետաքրքրված է այդ տարածքով (հետաքրքրությունը ոչ մի կապ չունի իս. Արևմտյանի հետ) ու ցանկանում է ձեռք բերել այն ու տներ կառուցել: Եվ ահա այստեղ է, որ պիտի մեր քաղաքի հարգարժան տերերի ուշադրությունը հրավիրենք: Պարոններ, պահը բաց թողնել չի կարելի: Եթե այդ տարածքում նոր շենքեր կառուցեցին, ապա մենք իսպառ կկորցնենք Արևմտյանի ոսկորները գտնելու վերջին հույսը: Ժամանակին մեծ գումարներ էր պահանջվում տարածքի բնակիչներին դրամական փոխհատուցում տալու եւ այդ տարածքը քանդելու ու ուսումնասիրելու համար: Այսօր մասնավոր անձինք կատարում են այդ: Մնում է մի փոքր հաստատական լինել եւ, օգտվելով առիթից, բանակցելով կառուցապատողների հետ փորձել ուսումնասիրել տարածքը: Մի պահ շեղվեք այս նախընտրական թոհուրոհից կամ էլ առանց շեղվելու այցելեք Այգեստանի այդ հատվածը, կհանդիպեք ձեր ընտրազանգվածին, ինչպես նաև անզեն աչքով կուսումնասիրեք տարածքը: Եթե հետաքրքրական ոչինչ չգտնեք, հեռացեք: Չեզանից հետո միգուցե ինչևոր մեկին կհետաքրքրի, ու նա արդեն էլ չի կորցնի պատմության մեջ մնալու առիթը:

**ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԵՊՅ Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, մագիստրատուրայի 1-ին կուրս**

## Ժամանց

### 1- Ուրախ անկյուն

#### ԻՆՉ ՊԻՏԻ ԱՍԵՆ

Մայրը դիմեց տղային.

- Վարդանիկ ջան, եթե քեզ կոնֆետ տան, ի՞նչ պիտի ասես:

- Էլի կուզեն:

#### ԱՐԵՎԻ ՄՈՏ

- Ընկեր Մարգո, մարդ կըրնա՞ երթա արելի մոտ:  
- Չէ՛, անկարելի բան է:  
- Չըբը ինչի՞ մերս լաց եղավ ու գիշերը տուն եկած հորս հար- ցրեց. «Էլի Արելի մոտ էիր գնացել...»:

#### ՉԻՇԵՑ

Վարդանիկը այգում հանդիպեց Ալեք պապին.  
- Բարեւ պապ, ինչը՞ղ ես:  
- Աստծու բարին, բալա ջան, լավ եմ, հետինդ վո՞վ է:  
- Սիրածս աղջիկն է:  
- Չա, օղուլ, սիրած ըսիր միտս ընկավ, մամըդ ինչը՞ղ է:

#### ԸՆԿԱՄԵՆԸ ՄԻ ՉԱՐՑ

Դասատուն դիմեց Վարդանիկին.  
- Ես ընդամենը մի հարց կտամ, եթե ճիշտ պատասխանեցիր՝ հինգ կնշանակեն: Առաջին մարդը ազգությամբ ո՞վ է եղել:  
- Ազգությամբ հայ է եղել:  
- Որտեղի՞ց իմացար:  
- Ըղիկ արդեն երկրորդ հարցն է:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է սովորել բանաստեղծու- քյան կեսը: Վարդանիկը ձեռք է բարձրացնում.

- Ընկեր Մարգո, չի եղնի՞ օր սաղ մեկից սորվինք:

- Ինչու՞:

- Օր մե անգամն երկուս ստանամ:

## 2- Արդյոք գիտե՞ք

Որպեսզի հավը խորովելու (տապակելու) ժամանակ դառնա կարմրակեղև, պետք է նրա վրա քսել թթվասեր:

\*\*\*

Եթե ապխտած (ծխահարված) երշիկը վատ է մաքրվում թաղանթից, հարկավոր է կես թուպե նրան մտցնել սառը ջրի մեջ:

\*\*\*

Եփելու համար պատրաստած միսը կարելի է առանց սառած վիճակից հալեցնելու դնել եռացող ջրով կաթսայում եւ եփել թույլ եռացող վիճակով:

## 3. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1-Օրորվում է ու ծավալվում,  
Երբեք գետնին չի թավալվում

2-Չեռքով չես բռնի,  
Կացնով չես կտրի,  
Չեռքիտ տակ ծնվեց՝

Երկնքում փնտրիր:

3-Չայրը դեռես չի ծնվել,

Որդին արդեն տանիք է:

4-Կարմիր գոմեջը բարկացավ,

Կերավ թեխտո,

Թե տուն,

Թե ծառ...

Հարյուր տակառ ջուր խմեց ու

Հազիվ մի կերպ հանգստացավ:

5-Մոտը՝ դրախտ,

Մեջ՝ դժոխք:

Պատ..1-Արծազանք 2- Արծազանք 3- Կրակ, ծուխ 4- Կրակ 5- Կրակ

## Առողջապահական

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՍՄԵՐ

եռացրած կաթի եւ ընդամենը 10 գլուխ սխտորի խառնուրդը բավական է, որ վերանան բոլոր տեսակի երիզորդները (ճիճուներ): Սխտորն ընդունելուց երկու ժամ հետո անհրաժեշտ է խմել լուծողական:

\*\*\*

Երիզորդը (ճիճուն) վերացնելու համար անհրաժեշտ է առավոտյան, քաղցած վճակում, ընդունել 2 ճաշի գդալ դդմի աղացած սերմ եւ անմիջապես վրան խմել տաք կաթ: Այնուհետև, մեկ ժամ անց, ընդունել լուծողական:

\*\*\*

Հարբածին սթափեցնելու համար մեկ բաժակ սառը ջրի մեջ լցնել 5 կաթիլ անուշադրի սպիրտ եւ խմեցնել:

\*\*\*

Հարբածության հաջորդ օրվա գլխացավն ու սրտխառնուքը անցկացնելու համար անհրաժեշտ է 1 բաժակ սառը ջրի մեջ լցնել 20 կաթիլ դաղձի սպիրտ եւ խմել:

\*\*\*

Հարբածի գլուխը բռնել այնպիսի դիրքով, որպեսզի ձեռքիդ ակերը հավեն նրա ականջներին: Այնուհետև ուժեղ ու արագ շփել զույգ ականջները: